ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2025 թվականի N 731 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԶԵՆՔԻ, ԶԵՆՔԻ ԼՐԱԿԱԶՄԻ, ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՔ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ, ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված զենքի, զենքի լրակազմի, օժանդակ միջոցների, ռազմամթերքի տեսակների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված անձնական պաշտպանության հատուկ միջոցների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների, անձնական պաշտպանության հատուկ միջոցների, զենքի, զենքի լրակազմի, օժանդակ միջոցների և ռազմամթերքի տեսակները սպառազինության մեջ ընդգրկելու, ձեռք բերելու, դրանք սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների, անձնական պաշտպանության հատուկ միջոցների, զենքի, զենքի լրակազմի, օժանդակ միջոցների և ռազմամթերքի տեսակները սպառազինության մեջ ընդգրկելու կամ դրանք սպառազինությունից հանելու վերաբերյալ եզրակացություն ներկայացնող հանձնաժողովի կազմը և գործունեության կազմակերպման կարգը:

3. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինությունից հանված հատուկ միջոցները, անձնական պաշտպանության հատուկ միջոցները, զենքը, զենքի լրակազմը, օժանդակ միջոցները և ռազմամթերքը փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն կամ ներքին գործերի նախարարություն՝ ոչնչացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ